

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ԿԱՐՈՂ Է ՎԱՐԱԿՎԵԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿՈՎ

ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿՈՎ ՎԱՐԱԿՎԱԾ ԱՆՁԻ ՀԵՏ ՍԵՐՏ ԿԱՍ ՄՏԵՐՄԻԿ ՇՓՈՒՄ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԿԱՍ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿԻ ՎԻՐՈՒՍՈՎ ԱՂՏՈՏՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ ՇՓՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

ԻՆՉՊԵ՛Ս Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿԸ

Կապիկի ծաղիկը կարող է տարածվել, երբ անձը սերտ շփում է ունենում կապիկի ծաղիկի վիրուսով վարակված մարդու հետ, կամ երբ անձը շփվում է վիրուսով աղտոտված իրերի հետ (օրինակ սպիտակեղեն, սրբիչներ):

Կապիկի ծաղիկ վիրուսը կարող է տարածվել՝

- Դիպչելով անձի մաշկի այն հատվածին, որն ախտահարված է կապիկի ծաղիկի վիրուսով
- Դիպչելով աղտոտված առարկաներին, գործվածքներին (հագուստ, անկողնային պարագաներ, սրբիչներ) և մակերեսներին, որոնց հետ շփվել է կապիկի ծաղիկով հիվանդ անձը
- Շփվելով կապիկի ծաղիկով հիվանդ անձի շնչառական կաթիլների կամ աչքերի, քթի և բերանի արտազատուկների հետ

ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿԻ ՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐԴԻԿ ՊԵՏՔ Է ԽՈՒՍԱՓԵՆ՝

1 ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿՈՎ ՀԻՎԱԴ ԱՆՁԻ ՀԵՏ ՍԵՐՏ ՇՓՈՒՄԻՑ

Ներառյալ գրկախառնվելուց, մերսելուց, համբուրվելուց կամ մոտ հեռավորությունից խոսելուց:

2 ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿՈՎ ՀԻՎԱԴ ԱՆՁԻ ՀԵՏ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒՑ

Ներառյալ բերանային, հետանցքային և հեշտոցային սեռական հարաբերություն ունենալուց կամ կապիկի ծաղիկով հիվանդ անձի սեռական օրգանների կամ հետանցքի դիպչելուց:

3 ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿՈՎ ՀԻՎԱԴ ԱՆՁԻ ՀԵՏ ՏԱՐԲԵՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒՑ

Ներառյալ համատեղ օգտագործվող գործվածքներին, մակերեսներին և հագուստին դիպչելուց: